

Հարցաշար
Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի

10-րդ դասարան

Տևողությունը 150 րոպե

Սեր ու բարօրություն ցանկանալով աշխարհին՝ դու քեզ ես երջանկացնում: Բարեհամբույր, անհիշաչար մարդը հարատև վայելում է վեհանձնության բերկրանքը: Երբ վանես քեզնից ընչաքաղցության ու նախանձի որդը, կապրես խաղաղ ու երջանիկ:

Մի՛ փորձիր անմիջապես հակադարձել, երբ քեզ դիտողություն են անում, մի պահ կա՛նգ առ, լսի՛ր՝ ինչ է ասում ներքին ձայնդ (նա երբեք չի սխալվում). գուցե մարդիկ ճիշտ են: Երբեք մի՛ թելադրիր կամքդ. ընկերներդ կամաց-կամաց կհեռանան քեզնից: Ոչ ոք բռնություն չի սիրում:

Անբասիր ու ազնիվ վարքդ, շիտակ, ուղիղ խոսքդ, հավատացած եղի՛ր, շատ բան կարող են փոխել քո շրջապատում. մարդիկ կհետևեն քո օրինակին, և աշխարհն ավելի գեղեցիկ, բարի կդառնա:

Որևէ գործ ձեռնարկելիս մի՛ վարանիր դիմել բանիմաց ու ողջախոհ մարդկանց՝ մտածելով, թե նվաստանում ես նրանց առջև:

Կյանքում կհանդիպես մարդկանց, ովքեր երբեք շնորհակալ չեն: Փորձի՛ր ներողամիտ լինել նաև նրանց նկատմամբ. թերևս մի օր հասկանան և գնահատեն արածդ: Հեռո՛ւ մնա երկերեսանիներից: Բնույթով ազնիվ մարդը նրանց հետ երկար չի քայլի:

Եթե մեղք ես գործել...

Երբ անհաջողության ես հանդիպում,

1. Շարունակի՛ր անավարտ երկու նախադասությունները: Վերնագրի՛ր տեքստը: (3 միավոր)
2. Հղի՛ր քո խոսքը աշխարհին՝ երկու նախադասությամբ: (2 միավոր)
3. Տեքստից դուրս գրի՛ր տարբեր եղանակների 4 բայ, նշիր ժամանակաձևը: (1 միավոր)
4. Տեքստից դուրս գրի՛ր կազմությամբ պարզ, ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր երկուական բառ: (2 միավոր)
5. Գրի՛ր *որևէ, երևի, ովքեր, երբեք* բառերի խոսքիմասային արժեքները: (1 միավոր)
6. Գրի՛ր *հավակնոտ, հրովարտակ, կապարճ, ակնակապիճ, դրասանգ, ասպար, ձաղկել, պնակալեզ, առտնին, բարձրատոհմիկ* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
7. Տրված եոյակներից ընտրի՛ր մեկական բաղադրիչ և կազմի՛ր բարդ ածանցավոր բառեր. հնամաշ-հեղհեղուկ-գթասրտորեն, կալանավայր-անըստցուտ-ակնախոռոչ: (1 միավոր)
8. Գրի՛ր *խնդրել, հրաժարվել* բառերի իմաստներին համապատասխանող երկուական դարձվածք: (2 միավոր)
9. Բացատրի՛ր *մարգարեն իր գավառում պատիվ չունի* թևավոր խոսքը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունը: (1 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Դարերի աննկուն ճամփորդը» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)